

## **ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՎԱՇԵ ՀԱԿՈՔՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ**

Սիրելի՛ հայրենակիցներ

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ ՀՀ Անկախության տոնի կապակցությամբ:

Լինելով ազատատենչ Հայկի արժանավոր ժառանգներ՝ մեր սերունդը վերահաստատեց նախնիների ազատ, անկախ ապրելու կամքն ու վճռականությունը, իրականություն դարձրեց մեր պապերի երազանքներն ու ձգտումները:

Հայերս աշխարհի հնագույն ազգերից մեկն ենք և մեր հարուստ պատմության ընթացքում ունեցել ենք վերելքներ ու վայրէջքներ: Մեր հաղթանակների մեծ մասը մենք կերտել ենք անկախության պայմաններում, իսկ պարտությունների մեծ մասը պետականության կորստի հետևանք են:

1991թ-ին հայկական հինավուրց հողի վրա նորից վերականգնվեց պետականությունը, մենք վերստին դարձանք ինքնիշխանություն ունեցող արժանապատիվ ազգերի ընտանիքի լիիրավ անդամ: Հեշտ չի տրվել մեզ անկախությունը, և առաջին տարիներին մեր ժողովուրդը ստիպված է եղել կյանքի ու արյան գնով պաշտպանել անկախ ապրելու իր իրավունքը և լուծել գոյատևման խնդիրներ՝ արցախյան պատերազմ, շրջափակում, տնտեսական ճգնաժամ, փախստականներ...

Եվ ի պատիվ մեր հերոսական ժողովրդի՝ կարողացանք այդ ծանր իրավիճակը հաղթահարել փոքր կորուստներով և արժանապատվորեն:

Այս տոնական օրը նորից երախտագիտությամբ հիշենք անկախության զոհասեղանին իրենց կյանքը նվիրաբերած և մեզ հպարտություն պարգևած հաղթանակած քաջորդիներին: Գլուխ խոնարհենք նրանց հերոսության առաջ:

Փառք ու պատիվ նրանց:

Սիրելի հայրենակիցներ

Մեր իրականության մեջ դեռևս առկա են բացասական երևույթներ՝ անարդարություններ, դժվարություններ, սխալներ, բայց դրանք հաղթահարելի ու լուծելի են:

Համոզված եմ, որ սահմանադրական փոփոխություններով սկիզբ առած համակարգային բարեփոխումներն այլևս անշրջելի են, և առաջիկայում արձանագրելու ենք մեծ հաջողություններ կյանքի բոլոր ոլորտներում: Յուրաքանչյուրիս պատասխանատվությունն ու դերակատարությունն իրականություն են դարձնելու մեր պատկերացումների Հայաստանը:

Կրկին շնորհավորելով անկախության տոնի առթիվ՝ ցանկանում եմ խաղաղ երկինք, ստեղծագործական աշխատանք, բարեկեցիկ կյանք, նպատակների իրագործում:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը և հայ ժողովրդի հավերժության ընթացքին ուղեկցող անկախությունը:

**ՀՀ Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյան**